ՀԱՄԱԴՐԱԿԱՆ ԲԱՅԱՁԵՎԵՐԻ ԿԱՂԱՊԱՐՆԵՐԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ

ԽԱՉԱՏՐՅԱՆ Լ. Մ.

Կաղապարները լեզվական որոշակի բնագավառի մոդելներ են, որտեղ ցույց է տրվում տվյալ կառուցվածքի բաղադրիչների դասավորությունը, որով էլ պայմանավորվում են նրանց իմաստային քերականական կապերը[1]:

Խոնարհման համակարգի միավորների կաղապարավորման (ձեվայնացված նկարագրության) ժամանակ մենք անհրաժեշտաբար ելնում ենք քննության առարկա լեզվական միավորների յուրահատկություններից:

1. Խոնարհման հարացուցային ձևերը արտահայտության պլանում երկու կարգի դրսևորում ունեն.

ա) մի դեպքում հանդես են գալիս վերլուծական կազմությամբ՝ բաղադրիչների անջատ գրությամբ. հմմտ. գրում եմ, գրել եմ[2],

բ) երկրորդ դեպքում՝ համադրական կազմությամբ՝ հիմքի և վերջավորության միաձույլ գրությամբ. հմմտ. գրեցի, կգրեմ:

2. Բայական ձևերի կառուցվածքային բաղադրիչները շարադասորեն կայուն չեն. ըստ քերականական իմաստի արտահայտման՝ վերլուծական ձևերի բաղադրիչները փոխում են իրենց տեղերը.

ա) ժիտական խոնարհման դեպքում ժամանականիշ ցուցիչը տեղափոխվում է առաջ. հմմտ. գրում եմ - չեմ գրում,

բ) համադրական կառուցվածքի բառերը, որոնք եղանակի և ժամանակի իմաստներն արտահայտում են բառաձևի սկզբի (եղանականիշ) և բառաձևի վերջի (ժամանականիշ) ցուցիչներով, վերածվում են վերլուծական ձևերի՝ ժամանականիշ ցուցիչի նախադաս դիրքով. հմմտ. կգրեմ - չեմ գրի, կխաղամ - չեմ խաղա և այլն:

3. Բայաձևերի կառուցվածքում որոշակի դեր ունեն սեռի և բաղադրության-քերականական ածանցները, որոնք բայական կաղապարներում հատուկ նշույթավորված են.

ա) միևնույն բայական բառույթի հարացուցային կաղապարները կազմելիս, ըստ բաղադրության-քերականական ածանցների առկայության (ն, չ, ան, են), պետք է առանձնացնել երկու տիպի կաղապար. ներկայի հիմքից կազմվող ձևերում՝ ածանցի նշույթով, իսկ անցյալի հիմքից կազմվող ձևերում՝ անածանց [զրո նշույթով

---

[1] *Կաղապարների քննության մասին տե՛ս* **Զահուկյան Գ.,** *Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները, Ե., 1974,* **նույնի՝** *Հայոց լեզվի զարգացումը և կառուցվածքը, Ե., 1969:* **Հովսեփյան Լ.,** *Գրաբարի բառակազմությունը, Ե., 1987:*

[2] *Ժամանակակից հայերենի վերլուծական բայաձևերի ձևայնացված քննությունը տե՛ս* **Խաչատրյան Լ.,** *Վերլուծական բայաձևերի կաղապարները ժամանակակից հայերենում (ՀՀ ԳԱԱ Լրաբեր հասարակական գիտությունների, 2011,N 1-2, էջ 226-237):*

կամ ածանցի տարրի (ն > ց) հերթագայությամբ կաղապար (հագենում եմ - հագեցա)],

բ) պատճառական սեռային առման (ցն) ածանցի դեպքում երկրորդ հիմքից կազմվող ձևերում դարձյալ գործում է ածանցի տարրի հերթագայություն (ն > ր), որ խոնարհման ձևերի կաղապար(ներ)ի դեպքում, կառուցվածքային առումով, դեր չի խաղում (մոտեցնեմ – մոտեցրի),

գ) բազմապատկական և կրավորական ածանց ունեցող բայերի խոնարհման ձևերի կաղապարները առաջին և երկրորդ հիմքերից կազմվող ձևերում կառուցվածքային տարբերություն չունեն:

4. Նախորդ կետերից կարելի է եզրակացնել, որ բայական համակարգում հնարավոր է դիտարկել խոնարհման կառուցվածքի երկու տիպ՝

ա) ներմասնիկավոր, ն և չ բաղադրության ածանց ունեցող բայերի խոնարհում ներկայի հիմքից կազմվող ձևերում (հմմտ. թռչ-եմ և թռա, մտ-ն-եմ և մտա),

բ) նախամասնիկավոր, երբ եղանականիշ ցուցիչները և ժխտական մասնիկը նախորդում են խոնարհված բայաձևերին (հմմտ. գրեմ - կգրեմ, խոսեմ - չխոսեմ):

5. Բայական համակարգում խոնարհման հարացույցի տարրերը (մասնիկները) խոնարհման բոլոր ձևերում պարտադիր կերպով հանդես գալ չեն կարող, նկատի ունենք՝

ա) անցյալ կատարյալի եզակի III դեմքը (հմմտ. գրեց+ի, գրեց+իր, գրեց+ ∅),

բ) ըղձական ապառնիի եզակի III դեմքը (հմմտ. խաղա+մ, խաղա+ս, խաղա+ ∅):

6. Բայի հարացուցային կաղապարներում կարևորվում են խոնարհման մասնիկները. տարբերակվում են՝

ա) խոնարհման նախամասնիկներ,

բ) խոնարհման հիմքակազմ միջամասնիկներ (բաղադրության - քերականական մասնիկներ),

գ) խոնարհման բուն վերջավորություններ՝ վերջամասնիկներ:

7. Գործառական դերի (կախվածության և անկախության) առումներով բայական այս երեք կարգի մասնիկներից նախամասնիկները զգալիորեն անկախ են (նրանց առկայությունը եղանականիշ դեր ունի կամ էլ ստեղծում է դրական-ժխտական հակադրություն). հիմքակազմ միջամասնիկներն ու բուն վերջավորությունները սերտորեն կապված են կաղապարի նախորդ տարրերի հետ:

8. Խոնարհման համակարգում զգալի տեղ է գրավում վերջամասնիկների քերականական համանունությունը (հմմտ. գր-ի, չեմ գր-ի - գրեց-ի), համանունություն կարելի է ցույց տալ նաև զրո ձևույթների միջև (հմմտ. խաղամ - խաղաս - խաղա-∅ և մի՛ խաղա-∅):

9. Խոնարհման համակարգում (անկանոն բայերի դեպքում) կարևոր դեր են խաղում տարահիմքությունը և հիմքի տարրի հերթագայությունը, որոնք տվյալ բայաձևի կաղապարն ստանալիս որոշակի դժվարություն են հարուցում. հմմտ. ուտ-ել և կեր-ել, մյուս կողմից՝ տան-ել և տար-ել: Այդ խոնարհման ձևերի

կաղապարները բնորոշվում են լրացուցիչ նշույթավորումով (ըստ առաջին և երկրորդ հիմքերից կազմված ձևերի տարարժեքության), և ստացվում է, այսպես կոչված, կրկնակի կաղապար (միևնույն բառույթի խոնարհման հարացույցում):

10. Բայական համակարգի կաղապարները ստանալու համար պետք է հստակեցնել բայական լծորդիչների (խոնարհիչների) դերը: Հայտնի է, որ բայական լծորդիչ ձայնավորները խոնարհման համակարգում ինքնուրույն վերջավորությունների արժեք չունեն (ինչպես հոլովիչները գոյականի հոլովական հարացույցում):

Նկատված է, որ այդ լծորդիչ ձայնավորները կարող են նախորդել ամենատարբեր բնույթի մասնիկների և, փաստորեն, նրանց հետ մեկ որոշակի ամբողջություն կազմել՝ պատկանելով մերթ հիմքին, մերթ վերջավորությանը, ինչպես՝ հագ-եցն-եմ բայաձևի մեջ ե-ն մի դեպքում նախորդում է սեռանիշ -ցն- ածանցին (ե-ցն), երկրորդ դեպքում՝ դիմանիշ -մ տարրին (ե-մ), իսկ շարժ-եց բայաձևի մեջ այն նախորդում է հիմքի -ց մասնիկին (ե-ց) և այլն[3]:

Բայի հարացուցային կաղապարները ստանալիս պետք է նկատի ունենալ, որ խոնարհման համակարգում մասնիկների հաջորդման որոշակի (դասավորություն) կարգ գոյություն չունի (եթե լծորդիչ ձայնավորները դիտարկենք որպես անկախ մասնիկներ): Մյուս կողմից՝ հնարավոր չէ բացառել բայական (վերջա) մասնիկների դասավորության (հաջորդման) կարգի գոյությունը: Այսպես, եթե վերոնշյալ հագ-եցն-եմ բայաձևի մեջ ցույց տվեցինք ե տարրի՝ տարբեր դիրքերում հանդես գալը, ապա մյուս կողմից՝ որքան էլ հարաբերական, այնուամենայնիվ, այդ տարրի և բայական մասնիկների դասավորությունը որոշակի կանոնակարգված է, քանի որ այդ (և նման) բայաձևերում բայական մասնիկների դասավորության այլ կարգ հնարավոր չէ դիտարկել (հմմտ. հագ-եմ-եցն կամ հագ-եց-եմն և այլն):

Բայական կաղապարներում երկակիությունից խուսափելու և մոտեցման ընդհանուր սկզբունք մշակելու համար նպատակահարմար է բայական լծորդիչ ձայնավորները դիտարկել և՛ որպես առանձին մասնիկներ, և՛ որպես բաղադրյալ մասնիկների տարրեր[4]: Այս կարգի մոտեցում կիրառելիս կարող ենք ստանալ յուրատեսակ կրկնակի կաղապար (ինչը հնարավոր է նաև անկանոն բայերի տարահիմք կաղապարների դեպքում): Ըստ այդմ, կարող ենք ստանալ.

ա) հիմքակազմ վերջավորություններ, որոնք հանդիպում են միայն վերջնային դիրքում և ներկայացնում են ձայնավոր (լծորդիչ) + բաղաձայն (դիմաթվային մասնիկ) կապակցություններ (խաղ-ացն-եմ, խաղ-ացն-ենք),

բ) վերջավորություններ, որոնք այլ վերջամասնիկներից առաջ հանդես են գալիս և հանդիպում են միայն վերջնային դիրքում (գր-եմ, գր-ենք, գր-եինք, գր-եիք և այլն).

---

[3] *Տե՛ս* **Ջահուկյան Գ.,** *Ժամանակակից հայերենի…, էջ 228-229:*

[4] *Նույն տեղում:*

գ) հիմքակազմ վերջամասնիկներ, որոնք կարող են հանդիպել այլ վերջամասնիկներից առաջ և վերջնային դիրքում չեն հանդիպում (բացի -եց, -ա / աց մասնիկներից)[5]:

Բայական համակարգում բայական բառույթի խոնարհումն իրականացվում է (համադրական ձևերի դեպքում) տարբեր կարգի վերջավորությունների կցումով, նախամասնիկներով (խոնարհման տեսակի և եղանակի կարգի առումներով), ինչպես նաև նախամասնի- կազուրկ ձևերով: Կատարելով այդ կարգի տարրերի գործառական խմբավորումներ՝ միևնույն բառի խոնարհման հարացույցում ա-ռանձնացնում են մասնակաղապարների երեք դաս. դա նշանակում է, որ միևնույն (մեկ) բայի համար հնարավոր է ցույց տալ երեք կարգի մասնակաղապար: Ըստ այդմ, մասնակաղապարների դասերն են՝

1) եմ/ամ տիպի վերջավորություններ ունեցողների դաս,

2) ի տիպի վերջավորություններով օժտված ձևերի դաս,

3) նախամասնիկազուրկ (շեշտավոր) ձևերի դաս:

Այժմ, ըստ մասնակաղապարների դասերի, փորձենք ցույց տալ մասնակաղապարների բանաձևերը՝ հետևելով Գ. Ջահուկյանի առաջարկած կաղապարավորման տեսության սկզբունքներին:

Ա. Առաջին դաս. եմ/ամ *տիպի վերջավորություններ ունեցող ձևերի համար հնարավոր են հետևյալ մասնակաղապարները.*

1. (a+) A+c — ա) (կ-) երգ-եմ, (չ-) երգ-եմ
   բ) (կ-) խաղամ, (չ-) խաղ-ամ
2. (a+) A+b+c — ա) (կ-) ընկ-ն-եմ, (չ-) ընկ-ն-եմ
   բ) (կ-) փախ-չ-եմ, (չ-) փախ-չ-եմ
   գ) (կ-) մերձ-են-ամ, (չ-) մերձ-են-ամ
   դ) (կ-) լող-ան-ամ, (չ-) լող-ան-ամ
   ե) (կ-) դ-ն-եմ, (չ-) դ-ն-եմ
   զ) (կ-) տա-ն-եմ, (չ-) տան-եմ
   է) (կ-) դառ-ն-ամ, (չ-) դառ-ն-ամ
   ը) (կ-) թաք-ցն-եմ, (չ-) թաք-ցն-եմ

Ինչպես երևում է բերված բայաձևերի կառուցվածքային պլանների վերլուծությունից, վերոբերյալ մասնակաղապարներին բավարարում են՝

ա) ենթադրական եղանակի ապառնի ժամանակի բայաձևերը,

բ) ըղձական եղանակի ժխտական խոնարհման (ապառնի ժամանակի) բայաձևերը:

Կառուցվածքային առումով այդ բայաձևերը բնորոշվում են՝

ա) արմատական հիմքով,

բ) բաղադրության-քերականական (հիմքակազմիչ) ածանցներով,

գ) պատճառական սեռային առման ածանցով:

---

[5] *Նույն տեղում, էջ 232:*

Բ. Երկրորդ դաս. *ի տիպի վերջավորություններով օժտված ձևերի համար հնարավոր են մասնակաղապարների հետևյալ իրացումները.*

1. (a+) A+c	ա) (չ-) փախ-ար. (չ-) ընկ-ար
2. (a+) A+b+c	ա) (չ-) երգ-եց-ի
	բ) (չ-) խաղ-աց-ի
	գ) (չ-) մերձ-եց-ա
	դ) (չ-) լող-աց-ա
	ե) (չ-) դ-ր-ի
	զ) (չ-) տա-ր-ա
	է) (չ-) դար-ձ-ա
	ը) (չ-) թաք-ցր-ի
3. (a+) A (+b) +c	ա) (չ-) զարկ (-եց)-ի

Երկրորդ դասի կաղապարներին բավարարում են սահմանական եղանակի անցյալ կատարյալի բայաձևերը՝ ժխտական խոնարհմամբ (նկատի չունենք երրորդ դեմքի զրո ձևույթով կազմությունները):

Այս բայաձևերը դարձյալ կառուցվածքային առումով բնորոշվում են պարզ, բաղադրության-քերականական ածանցով և պատճառական (սեռանիշ) ածանցներով: Անշուշտ, խոնարհման ձևերի մեջ որոշակի արժեք ունեն անկանոն բայերի ածանցական տարրերի հերթագայությունները (ն>ր, ն>ձ. համապատասխանաբար՝ տա-ն-ել> տարա, դառ-ն-ալ>դար-ձ-ա):

Գ. Երրորդ դաս. *Նախամասնիկազուրկ ձևերի դասին բավարարում են բայի եղանակային ձևերի հետևյալ կաղապարները.*

1. A (+c)	ա) տես - ե՛ք (տե՛ս, տես-ե՛ք)
2. A+c	ա) անց-ի՛ր (անց-ի՛ր, անց-ե՛ք)
	բ) փախ-ի՛ր (փախ-ի՛ր, փախ-ե՛ք)
3. A ((+b) +c)	ա) զարկ-եց-ե՛ք [զա՛րկ, զարկ(-եց) - ե՛ք]
4. A+b (+c)	ա) խաղ-աց-ե՛ք (խաղ-ա՛, խաղ-աց-ե՛ք)
5. A (+b) +c	ա) երգ-եց-ե՛ք [երգ-ի՛ր, երգ(-եց) - ե՛ք]
6. A +b +c	ա) մերձ-եց-ի՛ր (մերձ-եց-ի՛ր, մերձ-եց-ե՛ք)
	բ) լող-աց-ի՛ր (լող-աց-ի՛ր, լող-աց-ե՛ք)

Միանշանակ է, որ երրորդ դասի նախամասնիկազուրկ ձևերի կաղապարներին բավարարում են հրամայական եղանակի բայաձևերը, որոնց բայահիմքերը բնորոշվում են պարզ կամ արմատական կառուցվածքով և բաղադրության-քերականական ածանցներով (հոգնակի թվում՝ ածանցական ն տարրի հերթագայությամբ՝ են > եց, ան > աց):

Ի՛նչ կարելի է եզրակացնել վերոնշյալ դասերի մասնակաղապարների վերլուծությունից:

1. Առաջին դասի (եմ/ամ տիպի վերջավորություն ունեցող) բայաձևերի մասնակաղապարները, անկախ բայահիմքի կառուցվածքային գործոնից, կազմվում են անորոշի կամ առաջին հիմքից:

2. Երկրորդ դասի (ի տիպի վերջավորություն ունեցող), ինչպես նաև երրորդ դասի (նախամասնիկազուրկ) բայաձևերի կաղապարները, անկախ բայահիմքի կառուցվածքային տեսակից, կազմվում են առիստի կամ երկրորդ հիմքից:

3. Երեք դասերի մասնակաղապարներից ամենակենսունակը և ամենաշատ հիմքերով ներկայացվածը առաջինն է. մյուսները միտում ունեն անցնելու այդ դասին. դրա հետևանքով՝

ա) որոշ բայեր (հիմնականում՝ անկանոն բայերը) անցյալ կատարյալում ունեն կրկնակի ձևեր (ցոյազուրկ և ցոյական). հմմտ. ան-(եմ), ար-ի/ար-եց-ի, դն-(եմ) > դ-ր-ի/դ-ր-եց-ի, թող-ն- (եմ) > թող-ի/թող-եց-ի, տամ > (տու >) տվ-ի/տվ-եց-ի, զարկ-եմ > զարկ-ի/զարկ-եց-ի և այլն,

բ) որոշ բայեր (անկանոն բայերը) ունեն կրկնակի ձևեր անկատարում և անցյալ կատարյալում. բան-ամ/բաց-եմ և բաց-ի/բաց-եց-ի, լվան-ամ/լվաց-եմ և լվաց-ի/լվացեց-ի, լամ/լաց-եմ և լաց-ի/լացեց-ի և այլն[6]:

4. Եմ տիպի վերջավորություն ունեցող աս-եմ բայը 2-րդ և 3-րդ դասի մասնակաղապարներում հանդես է գալիս լծորդության փոփոխությամբ, հմմտ.

ա) I դաս. (կ-) աս-եմ, (չ-) աս-եմ

բ) II դաս. (չ-) աս-աց-ի

գ) III դաս. աս-ա՛, աս-աց-ե՛ք:

Ընդունված է կաղապարային այս կարգի (լծորդիչ ձայնավորի) փոփոխությունն անվանել կաղապարային տարասեռություն (հմմտ. գրբ. գիտ-եմ / գիտ-աց-ի, մերկ-եմ / մերկ-աց-ի, մարթ-եմ / մարթ-աց-ի և այլն):

5. Վերոբերյալ երեք դասերը տարբերվում են ինչպես մասնակաղապարների, այնպես էլ ենթադասերի հնարավոր քանակով, որ պայմանավորված է տվյալ դասին պատկանող մասնիկների գործառական հնարավորություններով, ինչպես նաև որոշ ձևերում մասնիկների գործառական բացակայությամբ:

Ինչպես երևում է բերված կաղապարային բանաձևերից, կաղապարը կազմող կարգերի ոչ պարտադրականությունը նշանակվել է փակագծերով, որ նշանակում է՝ փակագծեր ունեցող կաղապարները կարելի է դիտել որպես երկու առանձին մասնակաղապար, որ իր հերթին բազմապատկում է ենթադասերի հնարավոր քանակը:

Տվյալ դեպքում (a+) A + c (կ-)գր-եմ կաղապարը ունի երկու իրացում՝ a + A + c > կգր-եմ և A + c - գր-եմ և այլն:

Ըստ այդմ.

ա) I դասն ունի երկու մասնակաղապար. I մասնակաղապարն ունի 2 (ենթադաս) X 2 (իրացում) = 4 ենթադաս, II մասնակաղապարն ունի 8 X 2 = 16 ենթադաս:

Առաջին դասի երկու մասնակաղապարին հատուկ է 20 ենթադաս:

բ) II դասն ունի երեք մասնակաղապար, եթե հաշվի առնենք կաղապարներում քերականական կարգերի պարտադրականությունն ու ոչ պարտադրականությունը, մասնակաղապարների իրացումը կհավասարվի 7-ի, որտեղ՝ I մասնակաղապարն ունի

---

[6] *Հմմտ.* **Զահուկյան Գ.,** *Ժամանակակից հայերենի…, էջ 235:* **Ասատրյան Մ.,** *Ժամանակակից հայոց լեզու, Ե., 1989, էջ 345-350:*

1 (ենթադաս) X 2 (իրացում) = 2 ենթադաս, II մասնակաղապարը՝ 8 X 2 = 16 ենթադաս, III մասնակաղապարը՝ 1 X 3 = 3 ենթադաս, որոնց հատուկ է 21 ենթադաս*:*

գ) III դասն ունի վեց մասնակաղապար, որոնք ունեն 11 իրացում, ընդհանուր առմամբ՝ 13 ենթադասով*:*

Ընդհանուր առմամբ երեք դասերի 11 մասնակաղապարներն ունեն 20 իրացում՝ 54 ենթադասերով:

Ընդ որում, ենթադասերը հավասար չեն հարացուցային ձևերի քանակին, քանի որ ամեն ենթադասում տրված են միայն խոնարհման I դեմքի ձևերը (հրամայական եղանակում՝ II դ.): Հարացուցային լրիվ ձևերի քանակը (հետևաբար, բոլոր դասերի խոնարհման մասնակաղապարները) կարելի է ստանալ խոնարհման ձևերի եզակի-հոգնակի թվերի և բոլոր դեմքերի ընդհանուր ձևերի գումարից (ներառյալ նաև զրո վերջավորությամբ ձևերը):

Հետևաբար, I դասի I մասնակաղապարի դեպքում կարելի է ստանալ նրա բանաձևին բավարարող խոնարհման ձևերի հետևյալ հնարավոր քանակը.

1. (a+) A + c = 2 *(ենթադաս) X 2 (իրացում) X 6 (3 դեմք՝ եզ. + 3 դեմք՝ հոգն.) = 24 բայաձև:*

Այս սկզբունքով կարելի է որոշել մյուս դասերի մասնակաղապարների բայաձևերի քանակը (հրամայական եղանակի բայաձևերի դեպքում, հասկանալի է, որ պետք է նկատի ունենալ 2-ական բայաձև):

Յուրաքանչյուր դասի շրջանակներում դիտարկելի են ենթադասերի տարբերությունները, որոնք պայմանավորված են ինչպես բայահիմքերի կառուցվածքային գործոնով, այնպես էլ հիմքակազմ տարրերի տեսակով ու քանակով (հիմքակազմ մասնիկների առկայությամբ և բացակայությամբ):

Եթե հաշվի առնենք այս գործոնները և դրանք կիրառենք յուրաքանչյուր դասի խոնարհման ձևերի բնութագրման համար, ապա յուրաքանչյուր դասում կառանձնացվեն երեքական խումբ՝ իրենց ենթախմբերով[7]:

I) Առաջին դաս.

ա) **Առաջին խումբ**

1. շարժ - եմ
2. զարկ - եմ
3. զն - ամ
4. տ - ամ

բ) **Երկրորդ խումբ**

1. ընկ - ն - եմ
2. հագ - ն - եմ
3. կոր - չ - եմ

գ) **Երրորդ խումբ**

1. մերձ - ենն - ամ
2. իմ - ան - ամ
3. տա - ն - եմ
4. դ - ն - եմ
5. դառ - ն - եմ
6. փախ - ցն - եմ

Առաջին խմբի բայաձևերը բնութագրվում են հիմնականում պարզ հիմքով, երկրորդ խմբի բայաձևերին հատուկ են հիմքակազմիչ (բաղադրության-քերականական) ածանցները (ն, չ), երրորդ խմբի բայաձևերի հիմքերն օժտված են

---

[7] *Հմմտ.* **Ջահուկյան Գ.,** *Ժամանակակից հայերենի..., էջ 235-236:*

տարբեր տիպի ածանցներով՝ հիմքակազմիչ մասնիկներով, պատճառական սեռի ածանցով և այլն):

Ընդհանուր առմամբ երեք խմբում ընդգրկված են 13 ենթախմբի բայաձևեր:

II) Երկրորդ դաս.

ա) **Առաջին խումբ**

1. շարժ - եց - ի
2. զարկ - եց - ի
3. թող - եց - ի
4. զն - աց - ի
5. տվ - եց - ի

բ) **Երկրորդ խումբ**

1. ընկ - ա
2. հագ - ա
3. կոր - ա

գ) **Երրորդ խումբ**

1. մերձ - եց - ա
2. իմ - աց - ա
3. տա - ր - ա
4. դ - ր - ի
5. դար - ձ - ա
6. փախ - ցր - ի

Առաջին խմբի բայաձևերը բնութագրվում են բաղադրյալ-ցոյական հիմքով (տալ անկանոն բայի երկրորդ հիմքում ու > վ հերթագայությամբ՝ տու/տվ), երկրորդ խմբի բայաձևերը՝ պարզ-արմատական (ածանցազուրկ) հիմքով, երրորդ խմբի բայաձևերը՝ թե՛ ցոյական, թե՛ ցոյազուրկ հիմքերով, ընդ որում առկա են հիմքի տարրի կամ ածանցների տարրերի հետևյալ հերթագայությունները՝ ռ - ն >ր - ձ, ն > ր, ցն > ցր:

Ընդհանուր առմամբ երեք խմբում ընդգրկված են 14 ենթախմբի բայաձևեր:

III) Երրորդ դասի *յուրաքանչյուր խմբում ընդգրկվում է երկուական ենթադաս (եզակի - հոգնակի հակադրությամբ).*

ա) Առաջին խումբ

Առաջին ենթադաս	Երկրորդ ենթադաս
1. շարժ - ի՛ր	շարժ (-եց) - ե՛ք
2. զա՛րկ	զարկ - ե՛ք
3. թո՛ղ	թող - ե՛ք
4. մն - ա՛	մն - աց - ե՛ք
5. տու՛ր	տվ (-եց) - ե՛ք

բ) Երկրորդ խումբ

Առաջին ենթադաս	Երկրորդ ենթադաս
1. ընկ - ի՛ր	ընկ - ե՛ք
2. հագ - ի՛ր	հագ - ե՛ք
3. կոր - ի՛ր	կոր - ե՛ք

գ) Երրորդ խումբ

	Առաջին ենթադաս	Երկրորդ ենթադաս
1.	մերձ - եց - ի՛ր	մերձ - եց - ե՛ք
2.	իմ - աց - ի՛ր	իմ - աց - ե՛ք
3.	տա՛ - ր	տա - ր - ե՛ք
4.	դ - ի՛ - ր	դ - ր - ե՛ք
5.	դար - ձ - ի՛ր	դար - ձ - ե՛ք
6.	փախ - ցր - ու՛	փախ - ցր - ե՛ք

Ակնհայտ է, որ երրորդ դասի մեջ ընդգրկված են հրամայական եղանակի բայաձևերը, I ենթադասում՝ եզակի, II-ում՝ հոգնակի թվի խոնարհման ձևերը: Բայական հիմքերի կառուցվածքային առումով կարելի է նշել հետևյալը. եզակի թվի I և II խմբերի բայաձևերը կազմված են I հիմքից, III խմբինը՝ անցյալ կատարյալի հիմքից, հոգնակի թվի բայաձևերը՝ միայն երկրորդ հիմքից:

Ընդհանուր առմամբ երեք խմբում ընդգրկված են 6 ենթադասի 14 (եզակի) + 14 (հոգնակի) =28 բայաձևեր:

Ընդհանրապես բայերի խոնարհման հարացույցի դասերը, նրանց մասնակաղապարները, դրանց հատուկ խմբերը, ենթախմբերը, ենթադասերը առանձնացնում ենք՝ հիմք ընդունելով բայական վերջավորությունների և նախամասնիկների գործառական դերը, ինչպես նաև նրանց պարտադրականությունն ու ոչ պարտադրականությունը:

Այս մոտեցումով, ինչպես նշեցինք, բնութագրվում են բայական (խոնարհման) համակարգի մասնակաղապարները՝ ընդհանուր առմամբ: Իսկ իրականում որքա՛ն են մեկ բայի խոնարհման հարացույցը կազմող ձևերը, տվյալ դեպքում նկատի ունենք, առայժմ, համադրական կազմությունները (միևնույն բայի խոնարհման հարացույցի բոլոր ձևերը ընդհանուր քանակը կարող են ստանալ վերլուծական կազմությունների մասնակաղապարները մակաբերելուց հետո միայն):

Այսպես, եթե անտեսենք միևնույն բայի վերլուծական-նկարագրական ձևերը և թողնենք միայն մեկ բառաձևի սահմաններում հանդես եկող ձևերը, ապա կստանանք խոնարհման համակարգի հարացուցային ձևերի հետևյալ կաղապարները (անտեսելով նախամասնիկներով, ինչպես նաև կրավորական և պատճառական ածանցներով ձևերը):

1	2	3	4
1. խոսեմ	խոսեի	խոսեցի	
2. խոսես	խոսեիր	խոսեցիր	խոսի՛ր
3. խոսի	խոսեր	խոսեց	
4. խոսենք	խոսեինք	խոսեցինք	
5. խոսեք	խոսեիք	խոսեցիք	խոսե՛ք
6. խոսեն	խոսեին	խոսեցին	

Ըստ աղյուսակի՝ **խոսել** *բայի համադրական խոնարհման կաղապարն ունի (6 X 4) – 4 =20 ձև: Նկատի ունենալով, որ կրավորական վ ածանցը կարող է հանդիպել բոլոր ձևերում, կունենանք 20 X 2 = 40 ձև, 1-ի, 2-րդ և 3-րդ սյունակները կարող են ստանալ չ- նախամասնիկը (6 X 3 = 18), 1-ին և 2-րդ սյունակները՝ կ- նախամասնիկը (6 X 2 =12), կստանանք 40 + 18 + 12 = 70 բայաձև: Իսկ եթե հաշվի առնենք, որ ներգործական սեռի բայերը կարող են ստանալ պատճառական սեռային առման ածանց՝ (է)ցն, ապա՝ 70 X 2 =140, եթե նկատի ունենանք նաև, որ* **խոսի՛ր** *ձևի համեմատ տարբերակված է* **խոսեցրո՛ւ** *ձևը, ապա կստանանք 140 + 1 = 141 բայաձև*[8]*:*

МОДЕЛИ СИНТЕТИЧЕСКИХ СЛОВОФОРМ ГЛАГОЛА В СОВРЕМЕННОМ АРМЯНСКОМ ЯЗЫКЕ

ХАЧАТРЯН Л. М.

Резюме

На основе анализа вопросов формального описания синтетических словоформ глагола в современном армянском языке можно выделить некоторые типы аффиксации глагольных словоформ:

а) *группа аффиксации типа* **- եմ/ամ:**

1. (Ո +) Ը + p – *(կ-) երգ - եմ, (կ-) խաղ-ամ*
2. (Ո +) Ը + b + p – *(կ-) ընկ - ն - եմ*

б) *группа аффиксации типа* **- ի:**

1. (Ո +) Ը + p – *(չ-) փախ - ար*
2. (Ո +) Ը + b + p – *(չ-) երգ - եց - ի*
3. (Ո +) Ը (+ b) + p – *(չ-) զարկ - եց - ի*

в) *группа словоформ без префиксов:*

1. Ը (+ p) – *տես - է՛ք*
2. Ը + p – *անց - ի՛ր*
3. Ը + ((+b) + p) – *զարկ - եց - է՛ք*
4. Ը + b (+ p) – *խաղ - աց - է՛ք*
5. Ը + (+ b) + p – *երգ - եց - է՛ք*
6. Ը + b + p – *մերձ - եց – ի՛ր*

В современном армянском языке синтетические словоформы глагола имеют 11 моделей.

---

[8] *Գ. Ջահուկյանը մեկ համադրական բառաձևի սահմաններում դրսևորվող ձևեր է համարում արգելական հրամայականի (մի՛) խոսիր (անշեշտ) և բուն հրամայականի խոսի՛ր (շեշտավոր) բայաձևերը և ընդհանրապես խոսել բայի համադրական խոնարհման կաղապարին վերագրում 145 բայաձև (տե՛ս* **Ջահուկյան Գ.,** *Ժամանակակից հայերենի…, նշվ. աշխ., էջ 238):*